Բալաք

Բնակչություն՝ 223

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 126 կմ,
Հեռավորությունը Սիսիան քաղաքից՝ 22 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1700 մ,
Կարգավիճակը՝ լեռնային,

Նախկին անվանումներն են. Բալաք, Պալագ, Պիլյագ, Ստեփանոս Օրբելյանի մոտ չի հիշատակվում: Գյուղի բնակիչների նախնիները եկել են Խոյի և Սալմաստի գավառներից 1826-29թթ. գյուղը Ղևոնդ Ալիշանը նույնացնում է Տաթևի վանքի նոր հարկացուցակում հիշատակվող Բլեկանցի հետ: Գյուղում կա կանգուն եկեղեցի:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:
Գյուղատնտեսությամբ զբաղվում է 37 գյուղացիական տնտեսություն:
Անասնագլխաքանակը 2012թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է.
- խոշոր եղջերավոր անասուններ՝ 250 գլուխ,
- մանր եղջերավոր անասուններ՝ 534 գլուխ,
- խոզեր՝ 7 գլուխ,
- մեղվաընտանիքներ՝ 326:
Համայնքում 2011թ. կատարվել է հացահատիկային մշակաբույսերի 75հա աշնանացան:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 1030 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 931 հա, որից՝
- վարելահող՝ 452 հա, խոտհարք՝ 24 հա, արոտ՝ 196 հա, այլ հողատեսք՝258 հա
- բնակավայրերի հողեր՝ 35 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 1 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 1 հա,
- անտառային հողեր՝ 7 հա, որից անտառածածկ՝ 7 հա
- ջրային հողեր՝ 55 հա